ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Աղվան Գևորգի Ղուկասյանը, Եղվարդ քաղաքում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-004-0626-0012 կադաստրային ծածկագրի 0,7317 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,2 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա մեքենատրակտորային պարկ կառուցելու խնդրանքով: Պահպանելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և ներառել այն ամենամյա հողային հաշվեկշռում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Աղվան Գևորգի Ղուկասյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան